

Ազամ զիլըն բաջասրդը. ար.  
Կեօլըն աղամ աւդամըդը. ար.  
Քգովարը բաղլըդըդը. ար.  
Քգովարա նա եարաշըր. ար.  
Մախմարդան չիւլլար եարաշըր.  
Մախմար չիւլլա նա եարաշըր. ար.  
Գըզըլ ելչարլար եարաշըր. ար.  
Գըզըլ ելչարա նա եարաշըր. ար.  
Խախչի իգիթտար եարաշըր. ար.  
Իգիթտարա նա եարաշըր. ար.  
Խախչի խանումլար եարաշըր. ար.  
Խախչի չանումլար եարաշըր. ար.  
Խախչի ուշախլար եարաշըր. ար.  
Գըզըլ քեաքիւլ ողանլար եարաշըր.  
Ուշաղլար նա եարաշըր. ար.  
Խախչի բէշիկլար եարաշըր. ար.  
Բէշիկլար նա եարաշըր. ար.  
Խախչի գարավշլար եարաշըր. ար.  
Գարավշլար նա եարաշըր. ար.  
Խախչի չօրաննար եարաշըր. ար.  
Զօրաննարա նա եարաշըր. ար.  
Խախչի գօյուննար եարաշըր. ար.  
Գօյուննարա նա եարաշըր. ար.  
Խախչի գուզուլար եարաշըր. ար.  
Աղա օղանլարըն աղը նադր.  
Ալղուլի, Շահղուլի, Թարղուլի.  
Աթտարըն եկին օլսուն.  
Գլըճըն քեասկին օլսուն.  
Գոստը գօստ օլսուն.  
Գիւշմանի գա փուչ օլսուն.  
Հայիտի հույիտի.  
Քըզըմքիտա բույիտի.  
Զօիր վերան խանում օլսուն.  
Ալ վերան գօմուր օլսուն.  
Գունաղլարը չօմուր օլսուն:  
Այ աղալար, այ խանումլար.  
Ալլահ վերդղնան՝ բիր բաթման հաղ,  
Բիր բաթման դիւիւ,  
Բիր գայիղ ուն,  
Բիր բաթման փիլա:

Դարարաղի ժողովրդական ջրօրհնեաց երգ. ըս  
այնքան շատ են և բաշմազան որ եթէ իւրաքանչ  
չիւր գիւղի վարիանտները ժողովն հաւաքին հա-  
տորներ կը կազմուի: Առայժմ Դարարաղի իւրա-  
քանչիւր գաւառից մի մի նմուշ:

Դ. 4. 4.

ՊԵՏՄՈՒԹԻՒՆ ՍԱՍԱՆԵԱՆ ՏԻՇՈՒԹԵԱՆ.

Թ. Ն Է Օ Լ Գ Է Ձ Է Ի.

(Եարոնակութիւն)

Այս բաղմամեայ պատերազմների ընթացքում  
որ յաճախ բանագնացութիւններով ընդհատուում  
էր, Բելիազարը երեան է զալիս իրբե զօրավար:  
Մի աչքի ընկնող իրողութիւն էր այս միջոցին ի մի-  
ջի այլոց և Մունդիրի Ասորիք ասոպատակելլ: Սա էր  
արար աւատական իշխանն Հիրայի, նոյն խոկ այն իշ-  
խանական տնից, որ յիշուեցաւ վերեւում: Խաւատին  
նու քիչ առաջ չափազանց զօրաւոր էր երեացել,  
ուստի մի առ ժամանակ իւլել էր նորանից իւր տի-  
րապետած երկիրն և կամ նրա մի մասը և տուել  
էր Հարիթի իշխանին: որ Կինդայի արքաւական բազ-  
մաձիւղ ընտանիքիցն էր: Հաղիւ թէ հաւանական  
լինի այն տեղեկութիւնը, որի համաձայն այս իրո-  
ղութիւնը իրը թէ կապ է ունեցել Մաղդակեաննե-  
րի շփոթութիւնների հետ:

Երբ հոռվմէական պատերազմները սկսան, Կա-  
ւատը յետ գարձրեց պատերազմի մէջ փորձուած  
Մունդիրին իր ամրող տէրութիւնը: Սա 520 թուի  
գարնանը յարձակուեց Ասորիքի վրայ, աւելից բո-  
լոր երկիրը մինչև Անտիոք և ահագին բազմութեամբ  
զերիներ բերաւ, որպէս զի գրանց համար փրկանք-  
ներ ստանայ: նա մի վայրենի հեթանոս էր, որ Ք  
.... Եզ մի ասորական վանքի կողուերին մոր-  
թելով զոհ բերաւ իր աստուածուհի Ուզզային  
(Աստղիկան աստեղ): Հենց նոյն տարում պատերազ-  
մի մէջ ընկաւ նրա սոսիս Հարիթը:

Կինդայի արքաւական տոհմից իր ձեռքն ընկած  
գերիներին Հիրայում սպանել տուաւ նաւ: Ամրող  
կէս գար շարունակ նա հոռվմէական հպատակների  
սարսափն էր իր ասպատակներով առանց հարցնելու  
խաղաղութիւն է արգեօք թէ պատերազմ: Աեր-  
ջապէս ընկաւ նա (յունիս 554) հոռվմէական արար  
իշխան Հարիթի գէմ վարած պատերազմում: այս  
Հարիթը Զարպալայի որդին էր, որի գերի բռնը-  
ուած որդուն նա նոյնպէս Ուզզային զոհ էր բերել:  
Մունդիրն էր նոյնպէս, որ Խաւատին դրգել էր մի  
Հարիթամեայ փորձից յետոյ կրկն Ասորիք աս-  
պատակելու համարձակուել (531): Պարսիկները ա-  
ռաջ անցան Խիրատին աջ ափով գէպի հիւսիս, իսկ  
Բելիազարն ստիպեց նրանց յետս նահանջելու: Սա-  
կայն Կալինիկոսի (Թաքա) մօտ: ուրեմն սահմանին  
մերձ, մի ճակատ տեղի ունեցաւ, որի մէջ Բելիա-  
զարը բռնորդին ջարդուեց (19. ապրիլի 551): 2ը  
նայելով այս յաղթութեան պարսիկ զօրավարը

ստիպուեցաւ յետ գառնալ։ Միջագետքում այս տարի պարսիկները մեծ յաղթութիւն ունեցան և արդէն Մարտիրոսոպպոյիս (Կափրկերտ, Maikerkat, արարերէն Maijafarkin) մեծ բերդն առել էին գրեթէ, երբ լուր հասաւ թէ թագաւորը փոխուել է, որից յետոյ զինադադար եղաւ։

Իւր մահուանից մի քանի տարի առաջ Կաւատն ինքը մի սոսկալի վախճան էր պատրաստել Մաղդակեանների համար։ Սրանք թուում է թէ կրկին այնքան զօրացել էին, որ ըշ նայելով իրենց տեսական գաղափարականութեան, հասարակութեան և տէրութեան հիմունքները կործանելու էին սպառնում; ուստի այլևս չէր կարելի համրերել նրանց։ Մաղդակեանների չարացէս վախճանը, որ ըստ արևելեան սովորութեան անչափ արիւաթաթաթաւ էր, տեղի ունեցաւ 528-ին կամ 529-ին առաջնորդութեամբ արքայորդի Խոսրովի, որի հետ հարկաւ համաձայնէր և թագաւորը։

Կաւատը Եռուաւ 13-ին սեպտեմբերի 531 թուի, 92 տարեկան հասակում Անշուշտ նա Խոսրովին յաջորդ էր Նշանակել։ Մի շատ լաւ վկայուած համրաւի համաձայն մինչև իսկ մահուան անկողնում նրան թագաւոր է պատկել տուել։ Խոսրով Ա. (Chosroes, Chosrau), որ կոչուում էր Անտուշուան (Անծարցան=Երանելի), յամենայն գեպս մի մեծ թագաւոր էր։ Մի գաղափարական իշխանի տիպար, ինչպէս արեւելցիք նրան հանդիսացնում են, հարկաւ չէր նա ամենեին, իսկ «արդարագատ» մականունը նա իրաւունքով է կրում։ Գետնահարկի կանոնաւորումն, որ նրա հայրն էր սկսել, և այն միջոցները, որ հարկահանութեան վրայ վերահսկելու համար ձեռք առաւ, պէտք է հպատակներին էլ այնքան ձեռնոտու եղած լինին, որքան և արքունի գանձարանին։ Գոնէ գրամական տեսակետով ամենաշահաւար գաւառումն Պարելսնիայում (Պրաք) սրանից սահմանուած հարկահանութեան կարգը, մինչև Սասանեան տէրութեան անկումն անգամ արևելեան հանդամանքներին համաձայն ծանր չէր երևացել մինչև իսկ շատ արդիւնաւէտ է եղել տէրութեան համար։ Այս մասին մենք ունինք արաբների անժխտելի

4. Որ Խոսրովի արքայ անուանուել իւր հօր կողմէց պարսիկ աւագանուն իւր զարմացրել է, ուղղափ անհնարին է։ Պէտք է աշք առաջ ունենալ, որ Պրոկոպի աւանդածները այս զահածառանգութեան եւ դրան կից պարագաների մասին, իմսուած են Կ. Պոլսի փախած, իսկական կամ ոչ իսկական, զահածառանգի (Կասատ, որի համի, թոռն նաւատ թագաւորի պատմաների վրայ, Այսու շնչը կամնում հարկաւ պնդել, որ այնպիսի քանի որ արքայական պատման մեջ գրիստոներին քարոզել խստի արգելուած էր, արդ երբ միաբնակ Ահուգէմիկ

վկայութիւնը, որոնք մահետական շրջանի հարկերի ծանրութեան մասին խօսելով՝ միւնչոյն ժամանակ տէրութեան դրամական վիճակին աճող վատթարանայն են շեշտում, համեմատելով պարսկական ժամանակի հետ։

Հասարակական բարեկեցութեան մասին հոդաց Խոսրով կամուրջներ, ջրանցքներ, թմրեր և լուսականների ջնջումով, որ նա իր կառավարութեան հենց սկզբում աւարտել էր, այնքան երախտիք ունէր զօրասատրեան կրօնի վրայ, որ մողերը նրան բոլորովին աննուէր էին, բայց Խոսրով թոյլ չը տուաւ նրանց երրեք իր վրայ իշխելու, Բարձր աւագանուն նա կարողանում էր Ճարտարութեամբ, բայց առանց վիրաւորելու, իրեն ծառայեցնել, Տէրութեան աղնուապետական հիմունքները թուում է թէ նա առաւել զօրացըրել է քան թէ տկարացըրել։ Ըրջահայեցութեամբ միջոցներ ձեռք առաւ Մաղդակի առաջբերած ստացուածքի և ընտանեկան յարաբերութիւնների անկայացութեան մասամբ գոնէ բառնալու։ Առանձին ինամք ցցց տուաւ նա զօրքի կազմութեան, Խոսրովն անժխտելի ձգտումն ունէր գէպի արևմտեան կը թութիւնը, Հասկանալի է ի հարկէ, որ անկարելի է սպասել, որ մի ասիացի բռնակալ յունական հանձարի ստեղծած ամենալաւն ու ամենաղնիւը կարողանար գնահատել մի այնպիսի ժամանակի, երբ նոյն իսկ Եւրոպայում շատ սակաները միայն այդ բաների համար քիչ շատ հասկացողութիւն ունէին։

Այն հեթանոս փիլիսոփաները, որոնք նրա մօտ գնացին Պարսկաստանում փիլիսոփայութեան տէրութիւնը, գտնելու յուսով՝ յետ գարձան յիրաւի շուտով յուսախար, բայց Խոսրովի համար յաւետենական փառքի արժանի մի գործ էր այն, որ 549 թուի Խաղաղութեան գաշինքի մէջ նրա ձեռներեցութեամբ որոշուեցաւ, որ այդ փիլիսոփաները հռովմէական տէրութեան մէջ կարող լինեն աղատորէն իրենց կրօնը պաշտելով ապրել։ Եւր քրիստոնեայ հպատակներին, քանի որ նրանք օրինապահ էին, ոչ միայն ոչ մի վիշտ չը պատճառեց, այլ ուղղակի պաշտպանեց նրանց հաւատը և այդպէս վարուեց ոչ միայն նեստորականների վերաբերութեամբ, այլ նաև միաբնակների, որոնք հռովմէական տէրութեան հետ աւելի սերտ կապեր ունէին, քան թէ նեստորականները, Տէրութեան կրօնից գառնալը հին օրէնքի համաձայն մահուամբ էր պատժուում և մոգակրօնների մէջ քրիստոնեութիւն քարոզել խստի արգելուած էր, արդ երբ միաբնակ Ահուգէմիկ

Համեմատիք Gibbon' cap. 40. Spiegel, Eran, Alterthumskunde 3. 461.

արրան, որ առաջ թագաւորից մեծամեծ նպաստներ էր ստացել իւր վանքի շինութեան համար թագաւորի որդիանցից մէկն միշտեց, որ ապա հոռվետացց մօտ փախաւ. Խոսրովն այդ կրօնաւորին ծանր պատճի չենթարկեց, այլ երկու տարի շարունակ, մինչև իր մահը (12. օգոստ. 575), թեթև արգելանքի տակ պահամ իր աշակերտների հետ յարաբերութիւն ունենալ, + Քրիստոնեանների համակրութիւնն անդամ նրա միւս անհաղանդ որդուն, ապստամբ արքայազն Անուշաղատի համար, ոչ մի հաղածանք չը յարոյց նրանց գէմ. Սակայն Խոսրովը մի թուլ և մեղի իշխան չէր, այլ եռանգումն, երբեմն և խիստ մինչև իսկ անագործյ և պատերազմանէր. 2


Խոսրովի գահակալութիւնից յետոյ սկսուած բանագնացութիւնները վերջացան մի տարրուանից յետոյ մի «յաւիտենական խաղաղութեամբ» (սեպտ. 532.), Հռովմայեցիք համաձայնեցան տարեկան մի մեծ գումար վճարելու և այլ զիջումներ էլ արին, իսկ պարսիկները վերադարձին Լազիստանի (սկ. ծովի արևելան ծայրում, հին Կողքիսում) մի քանի բերդերը, Կնչափս երևում է, պարսից թագաւորն էլ շատ իր խաղաղութիւն ցանկանում. Հաւաննօրէն այդ խաղաղութիւնը նա գործ դրաւ անմիջապէս իւր տէրութեան սահմաններն ապահովելու ընդդէմ զանազան բարբարոսների. Աւանդութիւնն արդար կերպով նրան վերագրում է մեծամեծ ճիգեր Կովկասեան և Հիւսիս արևելեան սահմանների ապահովութեան համար 5, սրան են վերաբերում նոյնպէս և մի քանի ըլքոստ ցեղերի բռնի գաղթեցնելը, Մի քանի տարրուանից յետոյ նա կրկին իրեն այնքան զօրաւոր զգաց, որ կարող էր հռումների գէմ պատերազմել, Թերեւս խսկապէս վախենում էր նա արդ միջոցներին Յուստինեանոսի Ավիրիկէում և Խտալիսյում տարած յաղթութիւններից և կամնում էր խանգարել բիւզանդական կայսրութեան չափազանց զօրանալուն:

Գոթերի թագաւոր Վիտիգէսի գեսպաններն երկի գոթերի թագաւոր Վիտիգէսի գեսպաններն երկի

պարսից թագաւորին հասկացրած կը լինին գրանցից պարսից տէրութեան համար յառաջացոյ վատանդները, Առաւել ևս զրուած կը լինի նրան այն հանգամանքը, որ բիւզանդեան Հայաստանի նախարարները, որոնք բազմագիմի անիրաւութիւնների պատճուով ապաստամբել էին, իրեն օդուութեանը դիմեցին, թէպէս և իրենք էլ բրիստոննեայ էին, Պաշնապրութեան պայմանների մանր խախտումները թոյլ էին տուել թէ չոսումները և թէ պարսիկները, գրա մասին արդէն իսկ հոգացել էին երկու տէրութեան սահմաններում բնակուող արաբները, Յամենայն գէպս Խոսրովը այս անդամ պատերազմ էր կամնում. Ես պատճառաւ էլ 540 թուին գուրս եկաւ նա վաղաժամ, որպէս զի Ծագուհ Ա.-ի պէս Ասորիի վերայ յարձակուի :

(Կը Շարունակուի)

#### Ն. Քարամեանց



#### ԲԱՆԱՒԹԻՐԱԿԱՆ—ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԳԱՆԱԿՈՇՈՒԹԻՒՆԸ ԵՎ ՈՒՐՏԸ ՄԱՐՄՆԱԿԱՆ ՊԱՏԻԺՆԵՐ ԴՊՐՈՑԵԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԻՒՆՆ Մէջ.

Պատմական տեսութիւն Մ. Ա.-ի:

Մի քանի զիմստվաններ վերջին ժամանակներս սկսել են միջնորդել, որ վերացուին մարմնական պատիժները գրագէտ գիւղացիների վերաբերութեամբ, Այդ միջնորդութեան շարժառիթներն այն աստիճանի աղնիւ են, որ անկարելի է լի համակըրութեամբ չը վերաբերուել գորան և չը ցանկալ յաջողութիւն։ Պարբերական մամուլն արդէն խօսեց և շարունակում է խօսել այդ միջնորդութեան վերաբերութեամբ ամենանպաստաւոր մտքով. և ամէն մի ճշմարիտ լուսաւորուած մարդ կողջունէ մեր հասարակութեան մէջ մի այդպիսի մարդասիրական ըղգացման յայտնուելուն. իսկ եթէ ձայների այդ համարիտ խմբի մէջ պատահում են տիսուր բացառութիւններ և լուսում ձայներ ի պաշտպանութիւն գանակութեան, որ գեռ շատերը պատրաստ են մարդկային աւեր խղճմանքի վերականգնման միակ միջոցը՝ համարել, պարզ է՝ որ այդ առաջ է գալիս այն բանից, որ մեղանում գեռես ամէնքը չեն եկել այն եղրակացութեան, թէ մարմնական պատիժները չունին ոչ մի առնչութիւն մարդկային արժանաւորութիւնը բարձրացնելու ձգտման հետ. և գեռ ամէնքը չեն համուստած, որ ժամանակ է թողնել յուղղութիւն բերելու կողիտ միջոցները,

1. Անուշէմիշի ասորական (չը տպագրուած) կենսագրութեան համաձայն, որ հաղորդել է ինձ աշակերտներից մէկը: Կենսագիրը, որ տիփուուած է ակամայ այստեղ մի հին արեւելեան միապետի բոլորովին անօրինի մեղմութեանը վկայելու Յագաւորին սատանայական բռնակալ Ներկայացնուու ծգուման յագորդ է տալիս այսու, որ մի չափազանց սննդորք հրաշքի միջոցով մի արժութիւն մասին է պատմում, սննդորք հրաշքի միջոցով մի արժութիւն մասին է պատմում, որ թոյլ չէ տունը արքայի դէմ սիթուած սպանման նախագիծն իրագործուել:

2. Եղն մատենագիտների ամսաստ վկայութիւնները, ինչպէս օրինակ Պրոկոպիոսից, յառաջանաւ են այն տեսչուով անքան յամափ զգալի կերպի վնասն է դից, որ Խոսրով անքան յամափ զգալի կերպի վնասն է հոգվածցոց եւ Խոստացրել:

3. Տես Սեբէռո, Գիրք 9. գլ. Ա. Ժ. Թ.